Ներկայացվել է
«Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի
խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 13-ի նիստին (10-րդ նիստ)

# «ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Զինծառայողների ապահովագրության» խորհրդի 6-րդ նիստից հետո (հունիսի 14, 2018թ.) կատարվել են հետևյալ աշխատանքները.

## I. 2018թ.-ի ՀՈՒՆԻՍԻ 14-ԻՑ ՅԱՅՍՕՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

1.1. Նախորդ հաշվետվությունից մինչ օրս Հիմնադրամի կողմից օրենքով սահմանված կարգով **2017թ.-ի հունվարի մեկից հետո** տեղի ունեցած դեպքերի մասով կատարվել են հատուցումներ թվով 15 դեպքերի մասով, որոնցից 10-ը՝ զոհված զինծառայողների ընտանիքներին, 5-ը՝ հաշմանդամություն ունեցող զինծառայողների:

***Զոհված 10 զինծառայողներից՝***

- 8-ը՝ պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողներ են, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 58 մլն. ՀՀ դրամ,
- 2-ը՝ սպայական կազմի զինծառայողներ են, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 82 մլն. ՀՀ դրամ:

***Հաշմանդամություն ունեցող 5 զինծառայողներից՝***

- 1-ը՝ I խմբի հաշմանդամ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայող է, որին հասանելիք հատուցման գումարը կազմում է 58 մլն. ՀՀ դրամ,
- 4-ը՝ II խմբի հաշմանդամ, որոնցից 3-ը պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողներ և 1-ը սպայական կազմի զինծառայողներ են, որոնց հասանելիք գումարը կազմում է համապատասխանաբար 29 մլն. և 53 մլն. ՀՀ դրամ:

1.2. **2015-2016թթ.-ին** տեղի ունեցած դեպքերի մասով մինչև օրս կատարվել են հատուցումներ թվով **147 դեպքերի մասով**, որոնցից 140-ը՝ զոհված զինծառայողների ընտանիքների, 7-ը՝ հաշմանդամություն ունեցող զինծառայողների:

***Զոհված 140 զինծառայողներից՝***

- 22-ը՝ սպայական կազմի զինծառայողներ են, որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է 300,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը *(առավելագույնը՝ 270,000, նվազագույն՝ 15,136 դրամ),*
- 18-ը՝ Տարածքային պաշտպանությանը ներգրաված կամ կամավորագրված անձիք են, որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է 250,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը *(առավելագույնը՝ 220,000, նվազագույն՝ 81,280 դրամ),*
- 22-ը՝ պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական (7) կամ շարքային (15) կազմի զինծառայողներ են, որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է 250,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը, որոնցից մեկին նաև տրամադրվում է լրացուցիչ 100,000 ՀՀ դրամ՝ երեք անչափահաս երեխա ունենալու համար *(առավելագույնը՝ 220,000, նվազագույն՝ 44,280 դրամ),*
- 72-ը՝ պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական (16) կամ շարքային (56) զինծառայողներ են, որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է 200,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը *(առավելագույնը՝ 170,000, նվազագույն՝ 20,000 դրամ),*
- 6-ը, որոնցից 2-ը՝ սպայական կազմի և 4-ը պայմանագրային ծառայության ենթասպայական կազմի զինծառայողներ են, որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է լրացուցիչ ամսական 100,000 ՀՀ դրամ, քանզի վերջիններս ունեն 3 կամ ավելի անչափահաս զավակ (պետական աջակցության և հատուցման գումարի միջև տարբերությունը բացասական է)։

***Հաշմանդամություն ունեցող 7 զինծառայողներից*՝**

- 2-ը՝ I խմբի հաշմանդամություն ունեցող պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողներ են, որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է 200,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը *(բոլորը՝ 109,000 դրամ),*
- 5-ը՝ II խմբի հաշմանդամություն ունեցող, որոնցից 4-ը պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի և 1-ը պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական կազմի զինծառայողներ են, որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է համապատասխանաբար 100,000 ՀՀ դրամի և 150,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը *(առավելագույնը՝ 67,008 դրամ, նվազագույնը՝ 26,000):*

**1.3. Նախորդ հաշվետվությունից մինչ օրս Հիմնադրամի կողմից կատարվել է հատուցում մինչև հաշմանդամության կարգը ստանալը.**

- Մեկ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի՝ 100,000 ՀՀ դրամ ամսական հատուցման չափով, որը կշարունակվի կատարվել առավելագույնը 6 ամիս։

**1.4. Կասեցվել է թվով 2 զինծառայողի վճարվող հատուցումները.**

- 1-ը հաշմանդամության կարգը լրանալու և նոր տեղեկատվություն հիմնադրամի չուղարկելու հետևանքով,
- 1-ը միակ շահառուի մահվան հետևանքով (կդադարեցվի այնժամ, երբ հիմնադրամը ստանա շահառուի մահվան վկայականը)։

1.5. 13.12.2018թ.-ի դրությամբ Հիմնադրամը հատուցումներ է տրամադրում 210 դեպքի մասով, *որոնցից 186-ը զոհված* զինծառայողների ընտանիքների և 24-ը հաշմանդամություն ունեցող զինծառայողների *(աղյուսակ 1՝ տոկոսային հարաբերակցություն):*




1.6. 210 դեպքերի մասով հատուցումներ են տրամադրվել 2017թ.-ից հետո 63, 2015թ.-ին 36, 2016թ.-ին 111 դեպքերի մասով (աղյուսակ 2՝ տոկոսային հարաբերակցություն) :



## II. 2017թ.-ի ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՑԱՅՍՕՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

| | 1.Պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրաված սպայական կազմի զինծառայողին | | 2. Պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրաված ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողին կամ տարածքային պաշտպանությանը ներգրաված կամ կամավորագրված անձին | | 3.Պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողին | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | դեպքերի քանակ | վճարված հատուցման մեծությունը | դեպքերի քանակ | վճարված հատուցման մեծությունը | դեպքերի քանակ | վճարված հատուցման մեծությունը | դեպքերի քանակ | վճարված հատուցման մեծությունը |
| Զոհվելու (մահանալու) կամ անհայտ բացակայող ճանաչելու դեպքում | **33** | 129,851,936 | **47** | 62,038,124 | **106** | 427,586,000 | ***186*** | ***619,476,060*** |
| Առողջությանը պատճառված վնասի հետևանքով (I խմբի հաշմանդամություն) | **-** | - | **1** | 14,250,000 | **7** | 64,654,000 | ***8*** | ***78,904,000*** |
| Առողջությանը պատճառված վնասի հետևանքով (II խմբի հաշմանդամություն) | ***3*** | *20,800,000* | ***4*** | *22,551,204* | ***9*** | *29,912,000* | ***16*** | ***73,263,204*** |
| Մինչև հաշմանդամության կարգը ստանալը տրամադրվող հատուցում | **-** | - | **-** | - | ***1*** | *300,000* | ***1*** | ***300,000*** |
| ***Ընդամենը*** | **36** | 150,651,936 | **52** | 98,839,328 | **123** | 522,452,000 | ***211*** | ***771,943,264*** |

## III. ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2018Թ.- ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

4.1. Պարտավորությունները Հիմնադրամի բոլոր շահառուների մասով (210 դեպք).

| | Որոշման պահից 20 տարվա կտրվածքով ստանձնած ամսական անուիտետային պարտավորություններ | Հատուցման ենթակա գումար մոտակա (20-t) տարիների ընթացքում |
|---|---|---|
| Զոհված | *7,620,905,344* | *7,170,901,572* |
| 1-ին կարգի հաշմանդամ | *412,320,000* | *350,852,000* |
| 2-րդ կարգի հաշմանդամ | *480,041,820* | *423,270,812* |
| Ընդհանուր | *8,513,267,164* | *7,945,024,384* |

4.2. Պարտավորությունները 2015-2016թթ.-ին կատարված դեպքերի մասով (147 դեպք).

| | Որոշման պահից 20 տարվա կտրվածքով ստանձնած ամսական անուիտետային պարտավորություններ | Հատուցման ենթակա գումար մոտակա (20-t) տարիների ընթացքում |
|---|---|---|
| Զոհված | *4,728,905,344* | *4,709,201,572* |
| 1-ին կարգի հաշմանդամ | *52,320,000* | *52,102,000* |
| 2-րդ կարգի հաշմանդամ | *41,041,820* | *40,870,812* |
| Ընդհանուր | 4,822,267,164 | 4,802,174,384 |

## IV. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ - 01 ՀՈՒՆՎԱՐ, 2017 – 13 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2018

| | Գումար | Տոկոս |
|---|---|---|
| **Հատուցումներ** | **771,943,264** | **100%** |
| Պարտադիր շարքային և կրտսեր ենթասպա | 522,452,000 | 67.68% |
| Պայմանագրային շարքային և ենթասպա, կամավոր | 98,839,328 | 12.80% |
| Սպա | 150,651,936 | 19.52% |
| **Պարտադիր վճարներ** | **12,779,324,940** | **100%** |
| **Նվիրաբերություններ** | **191,877,567** | **100%** |
| **Կայքի միջոցով** | 16,407,017 | 9% |
| **Բանկային փոխանցմամբ** | 175,470,550 | 91% |
| *«Հայփոստ» ընկերության թողարկած նամականիշերի միջոցով* | *4,848,400* | |
| *«Կաֆֆա» սուրճի վաճառքի միջոցով* | *1,250,000* | |

## V. ԿԱՏԱՐՎՈՂ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ






## VI. ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ՝ ԸՍՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵԿ-ԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ՝ 2018թ.-ի ՀԱՄԱՐ

1. Հայաստանի Հանրապետությունից ստացված դրոշմանիշային վճարներ (11 ամիս)

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վճարող կազմակերպություններ | 27,674 | 27,710 | 27,093 | 27,484 | 26,957 | 24,928 | 27,626 | 27,006 | 25,436 | 22,396 | 4,261 |
| Վճարողների քանակ | 475,546 | 483,528 | 480,216 | 490,238 | 481,104 | 431,049 | 507,192 | 495,560 | 465,987 | 404,523 | 34,746 |
| Կազմակերպությունների կողմից վճարված գումար | 475,546,000 | 483,528,000 | 480,216,000 | 490,238,000 | 481,104,000 | 431,049,000 | 507,192,000 | 495,560,000 | 465,987,000 | 404,523,000 | 34,746,000 |

2. Արցախի Հանրապետությունից ստացված դրոշմանիշային վճարներ (11 ամիս)

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վճարող կազմակերպություններ | 2,060 | 2,047 | 2,018 | 1,992 | 1,980 | 1,947 | 1,892 | 1,824 | 1,730 | 1,488 | 151 |
| Վճարողների քանակ | 35,576 | 36,022 | 36,196 | 36,055 | 36,035 | 35,591 | 35,114 | 34,071 | 33,820 | 30,585 | 2,266 |
| Կազմակերպությունների կողմից վճարված գումար | 35,576,000 | 36,022,000 | 36,196,000 | 36,055,000 | 36,035,000 | 35,591,000 | 35,114,000 | 34,071,000 | 33,820,000 | 30,585,000 | 2,266,000 |

## II. ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԱՃԸ (ՀՈՒՆԻՍԻ 14-ին ԿԱՅԱՑԱԾ 6-րդ ՆԻՍՏԻՑ ՀԵՏՈ)

| | | *2018թ.* | *Հունվար* | *Փետրվար* | *Մարտ* | *Ապրիլ* | *Մայիս* | *Հունիս* | *Հուլիս* | *Օգոստոս* | *Սեպտեմբեր* | *Հոկտեմբեր* | *Նոյեմբեր* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հավաքագրված գումար | ՀՀ | *Նիստ 6* | 462,312,000 | 463,343,000 | 436,247,000 | 389,012,000 | 48,693,000 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | | *Նիստ 10* | 475,546,000 | 483,528,000 | 480,216,000 | 490,238,000 | 481,104,000 | 431,049,000 | 507,192,000 | 495,560,000 | 465,987,000 | 404,523,000 | 34,746,000 |
| | Արցախ | *Նիստ 6* | 35,262,000 | 35,564,000 | 35,426,000 | 32,954,000 | 2,377,000 | 0 | 0 | 0 | | | |
| | | *Նիստ 10* | 35,576,000 | 36,022,000 | 36,196,000 | 36,055,000 | 36,035,000 | 35,591,000 | 35,114,000 | 34,071,000 | 33,820,000 | 30,585,000 | 2,266,000 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Աճ | ՀՀ | *Տոկոսային* | 2.78% | 4.17% | 9.16% | 20.65% | 89.88% | 0.00% | 0.00% | 0.00% | 0.00% | 0.00% | 0.00% |
| | | *Գումարային* | 13,234,000 | 20,185,000 | 43,969,000 | 101,226,000 | 432,411,000 | - | - | - | - | - | - |
| | Արցախ | *Տոկոսային* | 0.88% | 1.27% | 2.13% | 8.60% | 93.40% | 0.00% | 0.00% | 0.00% | 0.00% | 0.00% | 0.00% |
| | | *Գումարային* | 314,000 | 458,000 | 770,000 | 3,101,000 | 33,658,000 | - | - | - | - | - | - |

## VII. ԿԱՏԱՐՎԱԾ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ՝ 01 ՀՈՒՆՎԱՐ, 2017Թ. – 13 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2018Թ.

